

էջ 149ա. «Աստանաւոր յիշեսլիք զսրբազան Էպիսկոպոսն զտէր Համազասպ, ընդ նմին եւ զԳրիգորես կրանաւոր, եւ զիս զանարժան զըջողս ի Քրիստոս...»:

Անթուակիան Ղեւոնդի պատմութիւն մըն ալ տեսած է եւ ընդօրինակած Հ. Եփ. Սէթեան, ուր կ'ըսուի. «Որ եւ ցանկացող եղեալ սորին տէր Համազասպ, ի պատուաւոր յաղղէն Մամիկոնեանց, ի հալալ արդեանց ետ հրաման ծրել փծուն գրչի Սարգսի» (Վենետիկի Յուլիան, Բ. Հատոր, էջ 292): Հայր Սէթեան 1835ին տեսած եւ օրինակած է, իսկ բնագիրը այժմ անյայտ կը մնայ, եթէ փձացուած չէ:

Համազասպ Եպիսկոպոսը յիշող ժամանակագրական շարքով յաջորդ յիշատակարանը ՉԽԲ (1293)էն է: Երեւանի թիւ 1479 ձեռագիր Պատմութիւն Ազաթանդեղոսի յիշատակարանը կ'ըսէ. «Արդ պատուական հայրապետին տեսուն Համազասպա յուսով բարերարին աստուծոյ տեսուն Յիսուսի նաեցեալ ի սէր վկայիցն եւ ի համբերութիւն սուրբ հաւրս մերոյ Գրիգորի Լուսաւորչիս, ետ գրել զուրբ մատենան կոչեցեալ Ազադանդեղոս, վասն յիշատակի եւ միջնորդութեան յաւուր ահաւոր եւ մեծ ատենի, անդ, ուր բանքն սպառին եւ զործքն թաղաւորեն»:

«Եւ ընծայցոյց զսա ի սուրբ Կարապետն, ի վանս Յոհաննու, ի յուստորութիւն հաւատացելոց, եւ ի վայելումն մանկանց եկեղեցւոյ, եւ ի փառս անմահ բանին աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեան»:

«Ի թվին ՉԽԲ (1293)»:

Ասկէ տարի մը վերջ կը գրուի իրեն համար Ներսէս Լամբրոնացիի «Մեկնութիւն Սաղմոսաց», Երեւանի թիւ 1526: էջ 905բ. «Փառք... Կարողութեամբն աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զմեծափառ կտակս ի թուականութեանս հայկազեան տոմարիս Չ երորդի քառասներորդի երրորդի (1294), ի դառն եւ յազեալ ժամանակիս յորում ոչ զոյր հանդիստ քրիստոնէից ի հարկապահանջութենէ ալլասեռիցն... յիշեսլիք ըզսրբազան Էպիսկոպոսն զտէր Համազասպ վերադիտող սուրբ ուխտիս Յովհաննու վանուց, զի ստացաւ զսա զանձ եւ յիշատակ անջինջ ի մեջ սուրբ կաթողիկէ եկեղեցւոյ եւ բազմախումբ եղբարցս, զի եւս առաւել զարգարեաց զեկեղեցիս հին եւ նոր կտակարանաւք եւ այլ բազում շինուածոյք սէսսպէս եւ զանազան»:

«Արդ աղերսիւ հայցեմ յամենեցունց ասացէք, տէր Յիսուս ողորմեա սորա (Համազասպ Եպիսկոպոսի) եւ տուր ի քո լուսեղէն խորանացդ, զի մտցէ եւ ժառանգեսցէ ընդ քոց սուրբ եւ ընտրեալ հայրապետացդ, նաեւ ամենայն ազգայնոց եւ արեան հարազատաց ողորմեսցի Քրիստոս իւր առատ ողորմութեամբն, ամէն»:

էջ 751ա. «Տէր, տէր եւ աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացաւդ սորայ սրբազան Էպիսկոպոսին տէր Համազասպայ վերադիտաւորի սուրբ ուխտիս Յոհաննու վանից ընդ նմին եւ եղկելի եւ զողորմելի գրչիս, ամէն»:

Շատ ցաւալի է որ յիշատակարանները ոչ մէկ ծանօթութիւն կու տան եւ յանուանէ չեն յիշեր Համազասպ Եպիսկոպոսի ազգականները:

Իր մասին վերջին ծանօթութիւնը ՉԽԹ (1300) թուականէն է: Յովհաննափանքի կաթողիկէի ներսը հիւսիսային պատի վրայ Հէճէպ Դաւիթի արձանագրութեան մէջ կը յիշուի «Առաջնորդ վանացս ա(է)ր Համ(ազասպ)» (Ղաֆաղարեան, թիւ 16):

Ե՞րբ մեռաւ Համազասպ Եպիսկոպոս՝ յայտնի չէ: Այլ մասին ոչ մէկ